ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՏԻԿԻՆ Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Վարդանյան.

Ի պատասխան Ձեր 12.12.2019թ. հ.01/486 գրության՝ տեղեկացվում է, որ Ալիխանյան եղբայրների փողոցի հ.6/1 հասցեում մասնավոր սեփականություն հանդիսացող, շուրջ 1976.1քմ մակերեսով հողամասերում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման նպատակով «ՌԱՏԿՈ» ՍՊ ընկերությանը՝ Երևանի քաղաքապետարանի կողմից նախագծման թույլտվություն է տրամադրվել դեռևս 2006թ.-ին, այնուհետև 26.09.2007թ. Երևանի քաղաքապետարան ներկայացված նախագիծը համաձայնեցվել և տրամադրվել է հ.01/18-012052-508 շինարարության թույլտվությունը, համաձայն որի՝ շենքը նախատեսված է եղել 12 վերգետնյա հարկերով (առավելագույն բարձրությունը մինչև 46,0մ), շինարարական աշխատանքները սահմանված ժամկետում չսկսելու արդյունքում, գործող կարգի համաձայն, շինարարական թույլտվությունը համարվել է ուժը կորցրած:

Մինչ օրս կառուցապատողի կողմից նոր նախագծման թույլտվություն ստանալու նպատակով էսքիզային առաջարկի, որպես այդպիսի (վերջնական) տարբերակ չի քննարկվել:

Միաժամանակ տեղեկացվում է, որ 2007թ. հաստատված հ.50-50/2-14-985-927 նախագծին կարող եք աշխատանքային կարգով ծանոթանալ՝ այցելելով Երևանի քաղաքապետարանի 2-րդ մասնաշենքի արխիվային մաս:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ